«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Էպոսի դերը հայրենասիրության և ազգային արժեհամակարգի ձևավորման գործում

Առարկան՝ Հայոց լեզու և գրականություն

Հետազոտող ուսուցիչ՝ Հակոբյան Սուսաննա

Ուսումնական հաստատություն՝ ՀՀ Արարատի մարզի Նորաշենի Ավ. Իսահակյանի անվան միջն. դպրոց

Երևան 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3
ԷՊՈՍԻ ԺԱՆՐԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 5
ՏԱՐԲԵՐ ՄՈՏԻՎՆԵՐԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ «ՍԱՍՆԱ ԾՌԵՐ» ԷՊՈՍՈՒՄ 9
ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՄԱՍ 19
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 24
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....25

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ազգային էպոսը էպիկական բովանդակությամբ էպիկական ժանրի բանաստեղծության կամ գրականության գործ է, որը ավանդաբար ներկայացնում կամ արտացոլում է որևէ ազգի մշակութային կամ ինքնաճանաչողական ոգին, դա կարող է վերաբերել նաև ինքնուրույնության կամ անկախության ձգտող որևէ էթնիկական կամ լեզվաբանական խմբի: Ազգային էպոսների մեջ հաճախ նկարագրվում է տվյալ ազգային էթնոսի ծագման և զարգացման պատմությունը. կամ պատմության մի մասը, կամ տվյալ ազգության ինքնորոշման կամ ինքնագիտակցման պատմության կարևորագույն դրվագները և այլ ազգային խորհրդանշանների ծագման կամ ընդունման պատմությունը:

Էպոսն ու հեքիաթը՝ որպես ժողովրդական բանահյուսության ժանրային տեսակներ ունեն ընդհանրություններ, մասնավորապես էպոսում առկա են հրաշապատում հեքիաթի տարրեր: Մեր **ուսումնասիրության թեման** էպոսի դերն է հայրենասիրության և ազգային արժեհամակարգի ձևավորման գործում: **Ուսումնասիրության արդիականությունը** պայմանավորված է էպոսի ուսուցման արդյունքում ազգային արժեքների ու գաղափարախոսության ընկալմամբ ու արժևորմամբ:

«Սասնա ծռեր» էպոսի համեմատական քննությամբ էլ պայմանավորված է սույն ավարտական աշխատանքի **ուսումնասիրության խնդիրը**, այն է՝ ինչպիսի ազգային գաղափարախոսություն է դաստիարակում էպոսը: Էպոսագիտությունն այսօր իր թիկունքին ունի «Սասնա ծռեր» էպոսի ուսումնասիրության լայն դաշտը: Նրա տարբերակիչ առանձնահատկությունները նկատի ունենալով՝ ընդունված է էպոսն ուսումնասիրել ըստ տիպաբանական խմբերի, որոնք 3-ն են: Այդ խումբը դրսևորում է էպոսի ոճային-կառուցվածքային այնպիսի հատկանիշներ, որոնք հնարավորություն են ստեղծում մագիստրոսական խնդիրն ուսումնասիրել՝ նշված բաժանումը նկատի ունենալով:

Ստեղծագործական նյութի քննությունը կատարված է հայ գրականագետների՝ հայկական ժողովրդական էպոսի առանձնահատկություններին նվիրված հետազոտությունների հայեցակետից: Թեմայի ուսումնասիրությունը հիմնականում կատարվել է **լեզվի քննության համաժամանակյա մեթոդով**:

Մեր **ուսումնասիրության տեսական ու գործնական արժեքը** փաստական հարուստ նյութի քննության հիման վրա հայկական ժողովրդական ստեղծագործությունների արժևորումն է: Ուսումնասիրությունների արդյունքում կատարված մեկնաբանություններն ու պարզաբանումները, դրանցից բխող

եզրահանգումները կարևոր են հայ բանահյուսական ստեղծագործությունների առանձնահատկությունների հետազոտման առումով:

ԷՊՈՍԻ ԺԱՆՐԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

«Էպոս» բառը գործածվում է երկու իմաստով. լայն առումով նշանակում է գրական երեք սեռերից մեկը (էպիկական, քնարական, դրամատիկական), նեղ ժանրային առումով՝ ժողովրդական հերոսական կամ ավանդական վեպ, վիպական բանահյուսության ծավալուն և բարդ տեսակ, որը բաղադրվում է վիպական ու պատմահերոսական երկերից, ավանդություններից, զրույցներից:

Էպոսը պատմում է ոչ միայն ժողովրդի հերոսական անցյալի մասին, այլև նրա պատմության գեղարվեստական արտացոլումն է: Էպոսի հիմքում սովորաբար դրված են լինում պատմական կարևորագույն իրադարձություններ, ժողովրդի հերոսական պայքարն իր ազատության համար: Սակայն էպոսի պատմական հատկանիշներից մեկն այն է, որ նրա մեջ անբաժանելի են պատմությունն ու երևակայությունը: Հենց երևակայությունն էլ, արտացոլելով ժողովրդի պատմական գիտակցության որոշակի աստիճանը, նույնպես ինչ-որ չափով պատմական է: Ժողովրդի կյանքն էպոսում արտացոլված է իր ամբողջ լայնությամբ ու բազմազանությամբ: Ահա թե ինչու ծանոթանալով որևէ ժողովրդի էպոսին՝ մենք քաղում ենք բազմաթիվ տեղեկություններ նրա հոգեբանության, բարքերի, կենցաղի, սովորույթների մասին, այն բնության մասին, որը շրջապատում է էպոսի հերոսներին և օգնում՝ հասկանալու նրանց, ժողովրդի բանաստեղծական, հոգևոր մշակույթի, նրա պատկերավոր մտածողության, գեղագիտական աշխարհընկալման մասին և այլն:

«Սասնա ծռերը» վերջնականապես ձևավորվել է VIII–X դարերում տեղի ունեցած պատմական մեծ իրադարձությունների ընթացքում՝ որպես արաբ զավթիչների դեմ հայության մղած տևական պայքարի արդյունքում նվաճած անկախության գեղարվեստական արտահայտություն: «Դիցաբանական հերոսի և, ընդհանրապես, դիցաբանության պատմականացման ընթացքը ակնհայտ է: Բայց դա երևույթի մի կողմն է միայն: Նրա անսովոր բարդության տեսակետից շատ կարևոր է նկատել, որ նա ոչ թե մեկ, այլ մի ամբողջ շարք դարաշրջանների արդյունք է»[1],- գրում է Գ. Գրիգորյանը:

Վիպերգի հիմքում ընկած են բազմաթիվ ապստամբություններ, որոնք հայերը մղել են արաբական խալիֆաթի նվաճողական քաղաքականության դեմ: Սակայն միայն դրանով չի սպառվում մեր էպոսի բովանդակությունը. այն չի

[1] **Գ. Գրիգորյան,** Էպոսի ժանրային հատկանիշները, Երևան, 1985, էջ 27:

սահմանափակվում միայն պատմական դեպքերի պատկերմամբ: «Սասնա ծռերի» նյութը կուտակվել է դարերով[2]:

Ավելի քան հազար տարի «Սասնա ծռերի» ստեղծմանը մասնակցել են ժողովրդական վիպասացների բազում սերունդներ: Նրանց ստեղծագործական երևակայությամբ «Սասնա ծռերը» շարունակ հղկվել, հարստացել է նորանոր միջադեպերով և բազմաթիվ պատումներով հասել նոր ժամանակներին: Լինելով հայության տարբեր սերունդների ստեղծագործական ձիրքի և դարավոր կենսափորձի արդյունքը՝ «Սասնա ծռերն» արտացոլում է ժողովրդի հավաքական մտածողությունը, կենսասիրությունն ու բարոյական ըմբռնումները, ազատասիրական ոգին: Էպոսում հետևողականորեն ընդգծվում և պաշտպանվում է հերոսական պայքարով ու հաղթանակով սեփական երկրի անկախությունը պահպանելու գաղափարը:

«Սասնա ծռեր» կամ «Սասունցի Դավիթ» հայ ժողովրդական հերոսավեպը վիպասացների և բանահավաքների կողմից կոչվել է նաև «Սասնա փահլևաններ», «Սասնա տուն», «Ձոջանց տուն», «Սասունցի Դավիթ կամ Միհրի դուռ», «Դավիթ և Միհր», «Դավթի պատմություն», «Դավթի հեքիաթ» և այլն:

Էպոսի հերոսներից Սանասարի և Բաղդասարի մասին հնագույն գրավոր ավանդությունը պահպանվել է Աստվածաշնչում (Թագավորաց չորրորդ, ԺԹ), հետագայում Մովսես Խորենացու (գիրք Ա, ԻԳ) և Թովմա Արծրունու (Թովմա Արծրունի և Անանուն, «Պատմություն Արծրունյաց տան») երկերում: «Անիծված և ժայռի մեջ փակված հերոսի արմատները հասնում են խորին հնադար, իսկ Սանասար ու Բաղդասարի սյուժեն կար արդեն Հին Կտակարանում…: Բայց ձևավորման ժամանակի հանգամանքը չի կարելի թերագնահել» [3] ,- գրում է Ա. Եղիազարյանը:

«Սասնա ծռերը» հայտնաբերել և ամբողջությամբ գրառել է Գարեգին Սրվանձտյանը 1873 թվականին Մշո Առնիստ գյուղում երեսփոխան Կրպոյից և հրատարակել Կ. Պոլսում («Գրոց ու բրոց» և «Սասունցի Դավիթ կամ Միհրի դուռ», 1874 թ.): Երկրորդ տարբերակը 1886 թվականին էջմիածնում գրի է առել Մանուկ Աբեղյանը՝ Նախո քեռի Մոկացուց և հրատարակել Շուշիում («Դավիթ և Միհր», 1889 թ.): Նորանոր տարբերակներ են գրառել Գ. Հովսեփյանը, Խ. Դաղյանը, Ս. Հայկունին, Ա. Աբեղյանը, Ե. Լալայանը, Կ. Մելիք–Օհանջանյանը, Ա. Ղանալանյանը և ուրիշներ:

---

[2] **Ա. Դոլուխանյան,** Հայ գրականության պատմություն, Երևան, 2006, էջ 54:

[3] **Ա. Եղիազարյան,** «Սասնա ծռերի» պոետիկան, Երևան, 1999, էջ 3:

1938–1939 թթ. «Սասնա ծռերի» 1000-ամյա հոբելյանի առթիվ մինչ այդ գրառված 60-ից ավելի պատումների հիման վրա Մ. Աբեղյանի, Գ. Աբովի, Ա. Ղանալանյանի խմբագրությամբ հյուսվել-կազմվել է մեկ միասնական համահավաք բնագիր («Սասունցի Դավիթ», 1939 թ.): Վեպի մեկ այլ համահավաք բնագիր է կազմել Տ. Չիթունին Փարիզում («Սասունական», 1942 թ.):

Էպոսի վիպասացների բուն հայրենիքը Վանա լճի ավազանն ու նրանից հարավ-արևմուտք և հյուսիս-արևելք ընկած գավառներն են՝ Սասուն, Մուշ, Բաղեշ, Մոկք, Շատախ, Վան, Հայոց ձոր, Խլաթ, Արճեշ, Մանազկերտ, Ալաշկերտ, Բայազետ: XIX-XX դդ. գավառներից պանդխտած և գաղթած վիպասացների ու նրանց սերունդների միջոցով «Սասնա ծռերն» անցել է Արևելյան Հայաստան, մասամբ պարսկահայերի մեջ և Թիֆլիս: Դրանց լեզուն հիմնականում արևմտահայ բարբառներն ու ենթաբարբառներն են, երբեմն նկատելի է նաև արևելահայ բարբառների ազդեցությունը:

«Սասնա ծռերը» ավանդվել է բանավոր, և նրա բնագրերը XIX–XX դդ. տարբեր վիպասաններից գրառված տարբերակներ են, որոնք կառուցվածքով, լեզվաբարբառային և վիպական ներքին հատկանիշներով բաժանվում են տիպաբանական–տեղագրական երեք մեծ խմբի՝ Սասնա, Մշո և Մոկաց: Նախնական պարզ ու կուռ տիպը հավանաբար եղել է Սասունինը, որի տարածումից էլ ստեղծվել են մյուս տարբերակները:

Էպոսում գործում է վիպական հերոսների չորս հիմնական սերունդ՝ Սանասար և Բաղդասար, Մեծ կամ Ձոջ Մհեր (երբեմն՝ Առյուծաձև Մհեր), Դավիթ (Թլոլ, Թլոր, Թլվատ, Թառլան մականուններով) և Փոքր կամ Պստիկ Մհեր: Հերոսների այս չորս սերունդը միմյանց հետ կապված են ազգակցական կապերով:

«Սասնա ծռերի» ամենաբնորոշ գիծը հերոսական անպարտելի ոգին է՝ պայմանավորված նրա նախահիմքում ընկած առասպելական դյուցազունների սխրանքներով և հայ ժողովրդի՝ իր ոսոխների, հատկապես արաբական բռնակալության դեմ մղած դարավոր պայքարով:

«Սասնա ծռերի» գրական մշակումները սկսվել են դեռևս 1890-ական թվականներից, սակայն Դավթի ճյուղի լավագույն մշակումը համարվում է Հովհաննես Թումանյանինը («Սասունցի Դավիթ», 1903թ.): Փոքր Մհերի ճյուղը բանաստեղծական մշակման են ենթարկել ռուս բանաստեղծ Ա. Կուլեբյակինը («Մհերի դուռ», Թիֆլես, 1916թ.) և Ավ. Իսահակյանը («Սասման Մհեր», 1922 թ.): Դավթի ճյուղը մշակել է նաև Եղիշե Չարենցը («Սասունցի Դավիթը», 1933 թ.) և ուրիշներ:

Էպոսի ամբողջական, մշակված տարբերակը 1939 թ. թարգմանվել է ռուսերեն: Համահավաք բնագիրը թարգմանվել է ֆրանսերեն, չինարեն, անգլերեն (թարգմանիչ՝ Լևոն–Զավեն Սյուրմելյան), գերմաներեն, վրացերեն, ադրբեջաներեն և այլ լեզուներով:

«Սասնա ծռերը» բաղկացած է չորս ճյուղից՝ «Սանասար և Բաղդասար», «Մեծ Միհր»,»«Սասունցի Դավիթ» և «Փոքր Միհր»: Սրանցից յուրաքանչյուրն ունի իր գլխավոր գործող անձը կամ հերոսը: Այդ հերոսներն օժտված են գերբնական ուժով, կրակոտ ու շիտակ բնավորությամբ, չարը կործանելու և բարին հաստատելու վճռականությամբ: Նրանք ներկայացնում են հորից որդի արյունակցական կապ և անձնուրաց կերպով կռվում են հանուն իրենց երկրի անկախության: Բնորոշ է, որ Սանասարն ու Բաղդասարը նախ տներ են կառուցում իրենց մոտ բնակություն հաստատած աղքատ ընտանիքների համար, ապա կառուցում Սասնաբերդը: Կամ՝ Մեծ Միհրը, գոտեմարտի մեջ մտնելով առևտրական բանուկ ճանապարհի վրա հայտնված առյուծի հետ, սպանում է գազանին և փրկում Սասունը սովի վտանգից: «Սասնա ծռերի» բոլոր չորս ճյուղերը շաղկապվում են իրար՝ իբրև մեկ ընդհանուր և ամբողջական հորինվածք՝ ընդգծելով այն պատմական իրողությունը, թե արաբական բռնապետության դեմ հայության ազատագրական պայքարը շարունակել են մի քանի սերունդներ:

Դյուցազնավեպի գաղափարական ու գեղարվեստական հատկություններն առավել ցայտուն են արտահայտված երրորդ ճյուղի մեջ, որը ստեղծագործության ամենածավալուն և ամենամշակված մասն է: Պատահական չէ, որ ողջ ստեղծագործությունը կոչվում է այդ ճյուղի անունով՝ «Սասունցի Դավիթ»: Դավիթը ժողովրդի ամենասիրելի հերոսն է: Նրա կերպարի մեջ ժողովուրդը մարմնավորել է գեղեցիկի, վեհության, բարու և արդարության մասին իր ունեցած նվիրական ձգտումները: Դավիթն ազատասեր, ազնիվ, քաջ և անվախ հսկա է: Նա թշնամիների դեմ մղած կռիվներում երբեք հանդես չի բերում փոքրոգություն, երբեք չի դիմում նենգության կամ բռնության: Մսրա Մելիքի զորքերի վրա հարձակվելուց առաջ Դավիթը բարձրաձայն կոչ է անում նրանց նախապատրաստվել կռվի: Հաղթելով Մելիքին՝ նա հրաժարվում է իրեն արած առաջարկությունից՝ թագավորել մսրցիների վրա: Հերոսականության հետ մեկտեղ՝ Դավթի կերպարն աչքի է ընկնում նաև պարզամտությամբ, ժողովրդի ու հայրենի բնաշխարհի նկատմամբ տածած խոր սիրով:

Մեր էպոսը թարգմանվել է բազմաթիվ լեզուներով և ենթարկվել գեղարվեստական մշակման՝ արձակ և չափածո: «Սասունցի Դավթի» մշակման փորձեր են կատարել Ս. Մանդինյանը, Հ. Ճաղարբեգյանը , Գ. Բալասանյանը ու Լ.

Մանվելյանը: Այդ մշակումները, սակայն, գեղարվեստական մեծ արժեք չեն ներկայացնում, և ուշագրավ են սոսկ որպես էպոսի մշակման նախափորձեր: Հայ ժողովրդական էպոսի իրենց բարձրարվեստ մշակումներով առանձնանում են մեր դասական գրականության երեք մեծ ներկայացուցիչները՝ Թումանյանը, Իսահակյանը, Չարենցը[4]:

Հնագույն ժամանակներից հայ ժողովուրդը բանավոր եղանակով հորինել է բազմաթիվ ստեղծագործություններ՝ առասպելներ, զրույցներ, հեքիաթներ, առակներ, հանելուկներ, ծիսական, օրորոցային, ռազմի, աշխատանքային երգեր և այլն: Այս շարքում բացառիկ արժեք են ներկայացնում հայկական ժողովրդական հեքիաթներն ու հայկական ժողովրդական էպոսը: Հեքիաթներում, ինչպես հայկական դյուցազնավեպի հյուսվածքում, որտեղ հրաշապատումն ու իրականը հաճախ պատկերվում են միմյանց զուգորդված: Ասացողները շատ հաճախ տարբերակում չեն դրել էպոսի և հեքիաթի միջև: Դրա պատճառն այն է, որ ժանրային մի շարք հատկանիշներ ընդհանուր են էպոսի և հեքիաթի համար: Թե՞ հեքիաթը, թե՞ էպոսը բանահյուսական երկեր են, որոնց ձևավորմա հիմքում ընկած է առասպելը, և դրանով էլ պայմանավորված է հրաշապատում հեքիաթի մի շարք մոտիվների առկայությունն էպոսում: Այսպիսով՝ հեքիաթի և էպոսի ժանրի բնորոշումների և դրանց համեմատությունը ցույց է տալիս, որ երկուսն էլ, ըստ էության, զրույց են նշանակել, վեպ՝ նախնական իմաստով: Առաջացել են հնագույն առասպելներից և կապված են մարդու առասպելական մտածողության հետ, ուստի էպոսի և հեքիաթի հարատևությունը պետք է փնտրել այն կետերում, որտեղ հերոսներն առավել ամբողջական են պահպանել իրենց առասպելական հատկանիշները՝ դառնալով չարի ու բարու կրողը:

ՏԱՐԲԵՐ ՄՈՏԻՎՆԵՐԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ «ՍԱՍՆԱ ԾՌԵՐ» ԷՊՈՍՈՒՄ

Էպոսի հերոսները գործում են պատմական կոնրետ միջավայրում՝ ի տարբերություն հեքիաթի: Հեքիաթի սյուժեն թափառիկ է, էպոսի սյուժեն առանձնանում է շեշտված ազգային դիմագծով: Էպոսում հրաշապատում հեքիաթի տարրերը մեծ թիվ չեն կազմում:

Բազմադարյան բանավոր գոյությունից հետո՝ 1874 թ. Գարեգին Սրվանձտյանցի կողմից առաջին տարբերակի հրատարակումից ի վեր, էպոսը

[4] **Հ. Թումանյան**, Սասունցի Դավիթ, Երևան, 1958, **Ա. Իսահակյան**, Սասմա Մհեր, Երկեր, հ. 2, Երևան, 1958, **Ե. Չարենց**, Գիրք ճանապարհի, Երևան, 1933

թևակոխեց իր կյանքի նոր՝ գիտական փուլը: Վիպերգի նկատմամբ գիտական համակարգված մոտեցումը հնարավորություն տվեց բազմակողմանիորեն քննելու էպոսը, լրացնել-համակարգել ամբարած հսկայական նյութը, խոսելու էպոսի ժանրային հատկանիշների և բանահյուսական այլ ժանրերի հետ նրա հարաբերակցության մասին: Մանուկ Աբեղյանը խնդիրը գիտականորեն հիմնավորում է «Հայ ժողովրդական վեպ» ուսումնասիրության «Հեքիաթ և վեպ» ենթագլխի մեջ[5]: Երկու ժանրերի հարաբերակցությանը գիտնականն անդրադառնում է նաև «Սասնա ծռերի» գիտական առաջաբանում. «Մեր վեպի սյուժեն հարուստ է: Այստեղ մեր առաջ ծավալվում են և հեքիաթային սյուժեներ. և մոտիվներ, և առասպելներ և դիցազնական սխրագործություններով լի երգեր և զրույցներ և պատմական իրական միջադեպեր»[6]:

Հ. Օրբելին կարևորում է էպոսի առասպելաբանական հիմքը. «Սասունցի Դավիթ» էպոսում... արտացոլված են թե՞ դիցաբանական ու կոսմոգոնիայի առավել լիակատար, ծավալուն պատկերը, թե՞ առասպելաստեղծության զարգացման փուլերը, իսկ «էպոսի առասպելական կողմը իր մի քանի առանձնահատկություններով հնարավորություն է ընձեռում առաջ քաշելու տարբեր ժողովուրդների հնագույն կուլտուրական կապերի հարցը»[7]:

Հեքիաթի բնորոշ տարրերի առկայությունը էպոսի տարբեր պատումներում և դրանց ներթափանցման որոշ պատճառներ մեկնաբանում է Արուսյակ Սահակյանը: Շահեկան զուգահեռներ արված են Սարգիս Հարությունյանի «Հայ առասպելաբանություն» աշխատության մեջ: Էպոսի և հեքիաթի կապի մասին ակնարկում է նաև Ալիտա Դոլուխանյանը. «Մեր ազգային էպոսում տեսնում ենք բանահյուսական այլ տեսակներ առկայությունը. սիրո և կարոտի երգերը, հեքիաթներ, առածասացվածքներ»[8]:

Հրաշապատում հեքիաթների ընդհանուր տարածում գտած սյուժեների և էպոսի համադրական քննության փորձ է Թ. Հայրապետյանի «Խորհրդանշային ցուցիչները հայ ժող հեքիաթներում և վիպական բանահյուսության մեջ» դոկտորական ատենախոսության առանձին գլուխը:

Էպոսի պատումներին ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ասացողներն իրենք ժանրային սահմաններ չեն դրել հեքիաթի և էպոսի միջև: Դրա պատճառն այն է, որ ժանրային մի շարք հատկանիշներ ընդհանուր են թե՞ էպոսի, թե՞ հեքիաթի

---

[5] **Մ. Աբեղյան**, Հայ ժողովրդական վէպը, Թիֆլիս, 1908, էջ 27-32:

[6] Սասնա ծռեր, Երևան, 1936:

[7] **Հ. Օրբելի**, Հայկական հերոսական վեպը, Երևան, 1959, էջ 110-111:

[8] **Ա. Դոլուխանյան,** Հայ ժողովրդական բանահյուսություն, Երևան, 2008, էջ 88:

համար, և շատ ասացողների կողմից էլ ասվել են որպես հեքիաթ: Էպոսը հայտնի էր «ծագում Տավթի խեքիաթ» ձևով, սակավ դեպքերում կոչում են «պատմություն»: Հրաշապատում հեքիաթները մեծ մասամբ ծագում են առասպելներից, էպոսի հիմքում նույնպես առկա են առասպելաբանական շերտը: Հատկապես հիշատակելի են վիշապամարտերի և կատարածաբանական առասպելի հետքերը էպոսում:

Հեքիաթային մոտիվները ստանում են վիպական խառնվածք, սերտաճում են վեպին, նրանց մուտքը վեպ չի բխում վեպի ներքին պահանջմունքից և կապ չունի նրա ժանրային նկարագրի հետ: Խնդիրը փոխվում է, երբ այդ մոտիվները վիպականանում են, այսինքն՝ պատմական և աշխարհագրական երանգավորում է լինում, վեպը «հարդարում է» հեքիաթի մոտիվները, հարմարեցնում իր կառուցվածքին, ուստի հեքիաթի և էպոսի զուգահեռները պետք է հիմնավորել տարբեր հարթություններում, ընդհանուր ժանրային և մասնավոր՝ առանձին պատումների սյուժետային զարգացման գծին զուգընթաց: Հեքիաթի և էպոսի տարբերակման մասին Լիլիթ Հովսեփյանը գրում է. «Շատ նմանություններ ունենալով հանդերձ՝ հրաշապատում հեքիաթն ու էպոսը բոլորովին չեն նույնանում և դրսևորվում են հետևյալ տարբերակիչ հատկանիշներ.

1. էպոսի հերոսները գործում են պատմական կոնկրետ միջավայրում, իսկ հրաշապատում հեքիաթը չունի կոնկրետացված միջավայր, եթե նույնիսկ կան աշխարհագրական ինչ-ինչ անվանումներ, դրանք նույնպես շատ ընդհանուր են:
2. էպոսի սյուժեն ունի շեշտված ազգային դիմագիծ, այնինչ հեքիաթի սյուժեն թափռիկ է և հեշտությամբ յուրացվում է տարբեր ազգերի կողմից:
3. Հրաշապատում տարրը մասնակի բացառություններով նվազագույնի է հասցված էպոսում»[9]:

Անգամ եթե ասացողը զգացել է հրաշքի զորության առկայությունը և միաժամանակ պատմում է այնպես, ինչպես լսել է իր ռացիոնալ բացատրությունն անպայմանորեն տալիս է՝ հարթեցնելու էպոսի կառույցը խաթարող հրաշալի առկայությունը, որը բացատրվում է ժողովրդի «կենդանի հավատքով», այսպես՝ Դավթի խաչ-պատերազմի զորության մասին հիշատակելով՝ ասացողը հավելում է «էն ժամանակ արդար մարդ էին, ինչ մուրազ ունէին, Աստուած կը կատարէր»: Այդպես չէ հրաշապատում հեքիաթում. այստեղ ամեն ինչ ենթարկվում է հեքիաթի հրաշքի տրամաբանությանը:

---

[9] **Լ. Հովսեփյան,** Հրաշապատում հեքիաթի տարրերը «Սասնա ծռեր» էպոսում// «Հովսեփ Օրբելին և «Սասունցի Դավիթ» էպոսը», Երևան, 2015, էջ 23:

Այսպիսով՝ թե՞ հեքիաթը, թե՞ էպոսը բանահյուսական երկեր են, որոնց ձևավորման մեջ էական դեր ունի առասպելաբանական հիմքը, դրանով է պայմանավորված հրաշապատում հեքիաթի մի շարք մոտիվների առկայությունն էպոսում, հրաշապատում հեքիաթի հերոսի գործառույթները բնորոշ են նաև վիպական հերոսներին, սակայն այն տարբերությամբ, որ սրանք աստիճանաբար զրկվում են առասպելաբանական-հրաշապատում տարրից՝ տեղափոխվելով պատմական -կենցաղային դաշտ:

Էպոսի և հրաշապատում հեքիաթի հարաբերակցությունը դիտարկելի է մի քանի հարթություններում, որոնցից յուրաքանչյուրն իր պարունակած հարուստ նյութով կարող է դառնել առարկա:

1. Կառուցվածքային ընդհանրություններ հեքիաթի և էպոսի միջև: Խոսքը կայուն կառույցների մասին է, սկիզբը, ավարտը, բանաձևային կաղապարները և այլն, որոնք նույնությամբ դրսևորվում են երկու ժանրերում:
2. Մոտիվների ընդհանրությունները, որոնցից բխում են նաև սյուժետային զուգահեռներ, զորօրինակ հերոսների ջրային ծնունդի անապական հղիության, ամուսնության և այլ մոտիվներ:
3. Գործող անձերի և իրերի, երևույթների, թվերի ընդհանրություններ, վիշապներ, հրեղե ձի, թուր, պառավներ, առյուծ, մատանի, քառասուն, յոթ թվերը և այլն[10]:

Հեքիաթի կառուցվածքային կարևորագույն առանձնահատկությունը նրա կայուն սկիզբ է ու ավարտ: Այս հատկանիշը էպոսին բնորոշ չէ, քանի որ նման սկիզբը ազդարարում է անորոշ ժամանակ, այն դեպքում, երբ էպոսում ժամանակը կոնկրետացվում է ողորմիների միջոցով: «Հենց առասպելական-հեքիաթային մոտիվներով կազմված միջադեպերի ու այլ տարրերի առատությունն է, որ հիմք է ստեղծել «Սանասար և Բաղդասար» ճյուղի առանձին, անկախ գոյությանը»[11],- եզրակացնում է Ա. Սահակյանը:

Մոտիվների ընդհանրությունները, որոնցից բխում են նաև տարբեր սյուժետային զուգահեռներ. էպոսի հիմքում ընկած է վիպական ուրվագիծ, որի շուրջը ծավալվում են վեպի գործողությունները:

ա. Կռապաշտ-խաչապաշտ,որոնք ներկայացնում են հակառակորդ երկրներ, կռվի իրադրությունը:

---

[10] **Լ. Հովսեփյան,** Հրաշապատում հեքիաթի տարրերը «Սասնա ծռեր» էպոսում// «Հովսեփ Օրբելին և «Սասունցի Դավիթ» էպոսը», Երևան, 2015, էջ 29:

[11] **Ա. Սահակյան,** նշվ. աշխ., էջ 103-104:

բ. Ամուսնություն (բռնի կամ սիրո հիման վրա):

գ. Հզոր ժառանգ (հիմնադիր, օտար նվաճողներից ազատող):

դ. Շինարարություն:

Էպոսի չորս սերունդներն էլ ունեն թե՞ հերոսակա, թե՞ մշակութային հերոսներին բնորոշ հատկանիշներ արտասովոր՝ ջրային ծնունդ, մանկական չարություններ, մշակութային գործունեություն, տարբեր սխրանքներ, բախում հոր հետ և ողբեւգական վախճան:

Երկվորյակ եղբայրների արտասովոր ջրային ծնունդը, ջրի հրաշագործ էությունը, զգալի է ողջ էպոսում[12]: Վեպի պատմական հիմքով հնագույն ճյուղը առաջինն է՝ Սանասարի և եղբոր վիպաշարը, որը հիմնված է սրբազան երկվորյակների հնօրյա առասպելի վրա՝ վիպական դրվագների բազմապիսի հարակցումներով: Դա Սասնա դյուցազնական տան հիմնադրման վիպական պատմությունն է՝ իր երկվորյակ ներկայացուցիչներով: Սա իր վիպական բաղադրությամբ առհասարակ դասական սկզբնամաս է՝ բնորոշ բուն հերոսավեպերին:

Էպոսի հերոսներից Սանասարի և Բաղդասարի մասին հնագույն գրավոր ավանդությունը պահպանվել է Աստվածաշնչում (Թագավորաց չորրորդ, ԺԹ), հետագայում Մովսես Խորենացու (գիրք Ա, ԻԳ) և Թովմա Արծրունու (Թովմա Արծրունի և Անանուն, «Պատմություն Արծրունյաց տան») երկերում: «Անիծված և ժայռի մեջ փակված հերոսի արմատները հասնում են խորին հնադար, իսկ Սանասար ու Բաղդասարի սյուժեն կար արդեն Հին Կտակարանում…: Բայց ձևավորման ժամանակի հանգամանքը չի կարելի թերագնահել[13]¦,- գրում է Ա. Եղիազարյանը:

Թե՞ ծիսական նախերգանք ունեցող և թե՞ նախերգանքազուրկ պատումներում վիպվում են հերոսների դյուցազնական արարքները, որոնք գեղարվեստորեն կերպավորվել են հիմնականում երեք հնավանդ առասպելների հիման վրա, հերոսավեպի սյուժետային հիմքն են կազմում սրբազան երկվորյակների, ամպրոպային աստծո կամ դյուցազնի, Միհր կամ Միթրա աստծո առասպելական սյուժեները, որոնք հարակցվել են միմյանց թեմաների ընդհանրությամբ, վիպական վերամշակմամբ և պատմական ավանդությունների հետ սերտաճմամբ:

Առասպելաբանական այդ տարբեր սյուժեների միավորման համար մեծ դեր է հատկացվել ջրի նախնադարյան պաշտամունքին: Վեպը սկսվում է երկվորյակների

---

[12] **Ս. Հարությունյան,** «Սասնա ծռեր» հերոսավեպի ծիսաառասպելական մի քանի հատկանիշների մասին, «Պատմա-բանասիրական հանդես», Երևան, 2010, N 1, էջ 76-77:

[13] **Ա. Եղիազարյան,** «Սասնա ծռերի» պոետիկան, Երևան, 1999, էջ 3:

առասպելով, վերջինիս երկվորյակ եղբայրների նախամայրը տիեզերքի ջրային տարերքն անձնավորող մայր դիցուհի է՝ Ծովինար, Ծովյալ կամ Ծովիան խաթունը՝ անունը բաղադրված հայերեն «ծով» բառից:

Էպոսի չորս ճյուղի հերոսներն իրենց խորհրդանշող Ծովինարը պատմականացել դարձել է խաչապաշտ Գագիկ-Խաչիկ թագավորի դուստրը: Ջրային ծնունդի հետ անմիջական կապ ունի Ծովինարը ոչ միայն որպես երկվորյակ դյուցազունների մայր, այլև առասպելական հերոսուհի.

Աստուծու հրամանով, ծովը բացվավ,
Մի շատ համեղ ջուր դուս էկավ;
Նայեց, տեսավ՝ մեկ ջոջ քար կա ծովու պռումկ,
Սիպտակ աղբուր մի էդ քարից կը թալի,
Ջուրը էլ էդ քարի չորս բոլոր բռներ էր,
Մարդ չէր կարնա առանց հալավ հանելու
էդ աղբուր երթա, որ ջուր խմի:
Ինքն իր շորերն էհան, գնաց էդ աղբուր,
Բուռ ետու էդ անմահական աղբրի մեջ,
Մի բուռ լիք ջուր խմեց,
Մեկ էլ՝ կիսատ:
Աղբուրն ցամաքավ:
էդ էրկու բուռ ջրից հղացավ[14]:

Ջրային ծնունդի հետ կապված հետաքրքիր է «Քյուչուկ-Մորադի հեքիաթը», որտեղ աղջիկը թագավորի պատվերով նրա պարտեզում զբոսնելիս սառնաղբյուրի ջրից խմում է և հղիանում: Կուսական ծնունդի մոտիվը սյուժետային տարբեր դրսևորումներով տարածված է հրաշապատում հեքիաթներում:

Ժողովրդական զրույցներում Ծովինարը ամպրոպային ոգի է, ձիավոր հեծյալ, որ ամպրոպի ժամանակ հրեղեն ձիով շրջում է ամպերի մեջ, կայծակ ու որոտ արձակում՝ անձրև կամ կարկուտ ուղարկելով երկիր: Ծովինարը մտել է հերոսավեպ, պատմականացել, դարձել հայոց թագավորի դուստր: Ծովից բխող աղբյուրից խմած երկու բուռ ջրից հղիանում է և ծնում երկվորյակ դյուցազուններ: Ջուրը դառնում է ժառանգորդային կարևոր սկզբունք. Սանասարն իր դյուցազնական զորությունը, հրեղեն ձին, թուր կայծակին ձեռք է բերում ծովի հատակից՝ այնտեղ բխող

[14] Սասունցի Դավիթ, համահավաք բնագիր Երևան, 1990, էջ 72: Հետագա շարադրանքում էջը կնշենք օրինակներից հետո:

Կաթնաղբյուրից ջուր խմելով, երկվորյակներն իրենց տունը շինում են հզոր առվակի ակունքի վրա, ունենում հզոր ժառանգ:

Սանասարի որդի Մեծ Միհրը մարտից առաջ լողանում է հայրենի Կաթնաղբյուրի ջրով, նույնը կատարում է նրա որդի Դավիթը, որն անգամ սպանվում է ջրի մեջ լողանալիս:

Այսպիսով՝ Սանասար և Բաղդասար եղբայրները էպոսի առաջին ճյուղի գլխավոր կերպարներն են: Նրանք, ինչպես և էպոսի բազմաթիվ այլ կերպարներ իրենց գործողությունների մի մասով հանդես են գալիս իբրև միֆական կերպարներ, իսկ մյուս մասով՝իբրև իրական և խորապես մարդկային կերպարներ: Առաջին դեպքում նրանք արտացոլում են հայ ժողովրդի առասպելական մտածողության հետքերը, իսկ երկրորդ դեպքում՝ բնության և հասարակական երևույթների նկատմամբ նույն ժողովրդի ցուցաբերած միանգամայն իրական վերաբերմունքը, այդ երևույթների խորապես ռեալիստական մեկնաբանությունը և կյանքի ճանաչողության ժողովրդական ըմբռնումը: Նրանց կերպարները ոչ թե հակադրվում կամ ժխտում են միմյանց, այլ լրացնում:

Սանասարն ու Բաղդասարը՝ իբրև առասպելական կերպարներ, մարմնավորում են բնության ամենահզոր տարերքներից երկուսը՝ ջուրը և կրակը: Էպոսի մյուս կերպարները նրանց տարբեր առիթներով կոչում են «ջրեղեն», «անձնահուր»: Այդպես են անվանում իրենց նաև Սանասարն ու Բաղդասարը: Այդ կոչումներն ու անվանումները պատահական չեն, այլ հիմնված են էպոսում առկա կոնկրետ աշխարհայեցողության, ըստ որի՝ Սանասարն ու Բաղդասարը գոյացել են իրենց մոր՝ Ծովինարի խմած մի բուռ լիքը և մի բուռ կիսատ ջրից: Երկվորյակ եղբայրները կապված են ջրին, նրանք միաժամանակ անձրևաբեր են, հատկություն, որ սերտորեն առնչվում է նրանց «ջրեղենության» հետ և պայմանավորվում է վերջիններով: Պղնձե քաղաքում բանտարկված աղջկան վիշապից ազատելուց հետո ջուրը անձրևի պես լցվում է քաղաքը: Սանասարն առավոտյան իրեն հյուրընկալող ծերուկին պատմում է, թե գիշերը սև ամպ է եկել և «քաղաքը թրջել»[15]:

Սասնա սև ամպն այստեղ դյուցազն Սանասարն է: Երբ նա կռվում է ծովային վիշապի դեմ, ծովը կատաղում է, բարձրանում, և անձրև է գալիս քաղաքում: Սանասար ու Բաղդասար եղբայրները անձրևի կամ ջրի համար կռվելով վիշապների դեմ և սպանելով նրանց, ըստ էության, ներկայանում են իբրև կյանքի սիմվոլներ:

Այս տեսակետից ուշագրավ է նաև նույն Պղնձե քաղաքում Քառասուն -Ճյուղ-Ծամի ազատագրման համար նրանց մղած կռիվը: Սանասարը ցանկանում է

[15] **Մ. Աբեղյան,** Հայկական ժողովրդական վեպը, Վաղարշապատ, 1908, էջ 169:

ամուսնանալ նրա հետ: Սակայն այդ նրան հեշտությամբ չի հաջողվում, որովհետև աղջիկը բանտարկված է ծովում նստած նույն մահվան ուժի վիշապի և վերջինիս երկվորյակ թագավորի կողմից, որ աղջկա հայրն է համարվում: «Այդտեղ փակված աղջիկը,- գրում է Մ. Աբեղյանը,- նույն ինքն արեգակն է, որ ծովային վիշապը հափշտակել է»[16]:

Գալիս է ծովային հրեղեն դյուռաոն Սանասարը, ազատում է վիշապի բերանից և լուսավորում է քաղաքը, այսինքն՝ արեգակը երևում է: Այսպիսով՝ կյանքի համար երկվորյակ եղբայրների մղած կռիվն այստեղ հանդես է գալիս աղջկա՝ լույսի, արևի ազատագրման համար մղած կռվի ձևով: Սանասարն ու Բաղդասարը իրենց ծնունդով ու գործողություններով խորհրդանշում են արևի կռիվը խավարի դեմ, կյանքի կռիվը մահվան դեմ:

Երկվորյակ եղբայրների բնութագիրը, սակայն, միայն դրանով չի սպառվում: Ինչպես այդ համազգային, համաժողովրդական տան կառուցման գործընթացում, այնպես էլ նրանից առաջ և հետո ծավալված գործողություններում դրսևորվում են նրանց կերպարների մյուս ոչ պակաս կարևոր առանձնահատկությունները՝ աշխատասիրությունը, ժողովրդասիրությունը, հայրենասիրությունը, ատելությունը բռնության նկատմամբ և մի քանի այլ գծեր: Նրանք սովորում են սեփական աշխատանքով պահպանել իրենց գոյությունը: Նրանց մերթ տեսնում ենք թագավորի ձիապանների պաշտոնում, մերթ ռանչպարության ման գալիս, մերթ որսորդություն անելիս, մերթ իրենց բերդի հիմքը դնելիս: Այս տեսակետից նրանց կյանքի պատմություն, սկսած Բաղդադից հեռանալու օրից, վերջացրած բերդաշինությամբ, ըստ էության, աշխատանքային դրվագների պատմություն է:

Էպոսի կերպարային համակարգում առանձնանում են նաև զույգ կերպարները: Դիտարկենք Սասունցի Դավթի և Մելիքի կերպարները: Միհրը կռվի է դուրս գալիս նաև Մըսրա Մելիքի՝ Մոսուլի թագավորության դեմ: Որոշ ժամանակ անց, երբ մեռնում է Մըսրա Մելիքը, նրա կինը՝ Իսմիլ խանումը, Միհրին խնդրում է գալ և օգնել իրեն իբրև անօգնական մնացած այրու: Միհրը չի լսում Արմաղանին և վստահ իր հավատարմության ուժին մեկնում է Մըսըր: Այստեղ նրան հարբեցնում են, տանում Իսմիլ խանումի պալատը, և նա հակառակ իր ցանկության դառնում է կրտսեր Մելիքի Հայրը: Մըսրա Մելիքի երակներում եռում է հսկա հոր արյունը, նա ժառանգել է նաև նրա ուժը, իսկ սրտում զգում է մարդկանց և բոլոր ժողովուրդների վրա իշխելու բուռն ծարավ, որը նրան ներշնչել է իր մայրը: Լույս աշխարհ բերելով իր այդ որդուն՝ Միհրը դրանով իսկ Իսմիլ խանումի հոգում ծնում է այն հուլսը, թե «հիմա կշողշողա

[16] Նույն տեղում:

Մըսրա աստղը, իսկ Սասնա աստղը կխավարի»: Իսմիլի կողմից Մելիքին տրվող այդ խրատները[a] իբրև հրաշագործ հակաթույն, սթափեցնում են Միհերին, և նա իր հոր հրեղեն ձիով Մըսըրից սլանում է հայրենի Սասուն: Միհերը վերադառնում է իր սիրեցյալ կնոջ մոտ, որը երդվել է քառասուն տարի հրաժարվել ամուսնական կյանքից: Բայց Միհերը խախտել է տալիս նրան այդ երդումը, ցանկանալով վառել Սասնա ճրագը, որպեսզի վերջինիս լույսից խավարի Մըսրա աստղը, և իր ուստրերն ու դուստրերը պաշտպան ունենան այն աղետների դեպքում, որ կարող է նրանց գլխին բերել Մըսրա Մելիքը: Իրականանում է Միհերի ուԱրմաղանի երազանքը. ծնվում է Դավիթը, շիրիմ է իջնում Միհերը, շիրիմ է իջնում Արմաղանը:

Օր օրի մեծանում է Դավիթը և սարսափ ազդում Մելիքին: Դավիթը քաջ է, և Մելիքին չի հաջողվում իր խորամանկություններով ծնկի իջեցնել հզոր դյուցազունին: Երեք-չորս տարում այնպիսի փահլևան է դառնում, որ խաղի ժամանակ բռնում ու դեն է շպրտում Մըսրա մելիքի նետած մկունդը: Չնայած իր հերոսական կեցվածքին՝ Սասնա հերոսը միամիտ է, չի խորամանկում, նաև աշխատասեր է: Ահա այն հիմնական հատկանիշները, որոնցով տարբերվում է Մելիքի կերպարից:

Մելիքի մարմինը երկու հավասար կեսերի բաժանելու, մենամարտից առաջ սյունը մեջտեղից կիսելու միջադեպերը, որոնք էլ ավելի ընդհանրանալով կարող են հանգել մայր հողի ու հայր երկնքի բաժանմանը, ինչն էլ ի վերջո, այլ մակարդակում կարող է ընթերցվել որպես աշխարհի կործանում ու վերստեղծում[17]:

էպոսում որոշ զույգ կերպարներ հանդես են գալիս նաև երկատված ձևով: Ասել է թե՝ այս դեպքում մի կերպարը բաժանվում է երկու մասի: «Սասունցի Դավիթ» էպոսում Միհերի կերպարը բաժանված է երկու մասի. առաջինը պապի կերպարն է, որն արտացոլում է ծագող արևի՝ ճաճանչափայլ և կենսալից արևի հատկանիշները, իսկ երկրորդը թոռան կերպարն է, որն արտացոլում է հոգնած արևի, մայր մտնող արևի հատկանիշները: էպոսի պատումներից մի քանիսում Մեծ Միհերին դժվար է զանազանել Փոքր Միհերից՝ պապին թոռից, քանի որ նրանք կարծես իրար մեջ են կիսել իրենց հատկանիշները: Պապը որսորդ է, սև ցուլ է սպանել՝ խավարի սիմվոլը, Միհրի նման ոչ թե Ցլասպանի մականուն է ստացել, այլ՝ Առյուծաձև, քանի որ նրա կերպարի մեջ են ներհյուսվել Արևելքում Նեմեական առյուծին հաղթող Միթրայի, Հերակլի, թերևս նաև հին արևելյան Գիլ•ամեշի կերպարի, հատկանիշները: Իսկ թոռը դե•երում է աշխարհով մեկ, հեռանում ժայռի խորքը: Չէ՞ որ անձավում հնուց ի վեր կարող էին •տնվել միայն Միհրի սրբավայրերը. Միհրի, որն ամեն օր դեմքը թաքցնում

[17] **Абрамян Л.,** Парные образы «Сасна Црер»: близнецы, сводные братья, двойственные герои, Հայկական «Սասնա ծռեր» էպոսը և համաշխարհային էպիկական ժառանգությունը, Երևան, 2004:

է իր հողածին երկրպա•ուներից, նախապես օծվելով իր լուսաճաճանչ դեմքի մշտնջենական փայլը պահպանող, մաքրող ջրում: Ծովի մեջ խորասուզվելը նույնքան է պայծառացնում Միհրի փայլը, որքան Միհրի ու նրա տոհմի ուժն է ամրապնդվում ջրի հետ շփվելիս: Սակայն թե՞ մեկ և թե՞ մյուս, թե՞ պապի, թե՞ թոռան կերպարում Միհրի երկատված տիպարն օժտված է թույլերի պաշտպանի ու հովանավորի, ժողովրդի բարօրության համար պայքարող մարտիկի գծերով, մարտիկ, որը կռվում է քաղաքը ջրից զրկողների դեմ, քաղցած ժողովրդին հաց հասցնելուն խոչընդոտ ուժերի դեմ: Միհրը հանդես է գալիս որպես գահին բազմած մարդակերներին պատժող, ժողովրդի բարեկեցությունը տարերային աղետներից պաշտպանող, անարդարության և միաժամանակ երկնքի դեմ մարտնչող հերոս, որը խոստանում է ժայռի խորքից դուրս գալ միայն այն բանից հետո, երբ հիմնակործան կլինի հին աշխարհը, կստեղծվի նորը.

Քանի աշխարհք չար է,
Հողն էլ ղալբցեր է,
Մեջ աշրքին ես չեմ մնա:
-Որ աշխարք ավերվի, մեկ էլ շինվի:
Եբոր ցորեն էղավ քանց մասուր մի,
Ու գարին էղավ քանց ընկուզ մի,
էն ժամանակ հրամանք կա, որ էլնենք էդտեղեն: /417/

Էպոսի մյուս կարևոր մոտիվը, որի զուգահեռները տեսնում ենք նաև հրաշապատում հեքիաթներում, ամուսնությունն է: Այն վիպական մանրամասներով արտահայտված է հատկապես 1-ին և 3-րդ ճյուղերում: Հայ ժողովրդական հեքիաթներում, ինչպես նաև էպոսի որոշ դրվագներում պահպանել են ամուսնության հնագույն ձևերը, երբ փեսացուին ընտրում էր աղջիկը, իր սիրեցյալին նամակ է գրում Դեղձուն Ծամը, գուսանների միջոցով իր մասին Սասունցի Դավթին տեղեկացնում է Խանդութը, հաճախ հենց մենամարտում են հարսնացուի հետ:

Ծիսական մրցության դրվագները արտահայտված են անև «Սանասար և Բաղդասար» ճյուղում. Պղնձե քաղաքում Սանասարը հաղթահարում է տարբեր փորձություններ Դեղձուն Ծամին արժանքնալու համար:

Որդի, էնի ոսկի խնձոր է,
էնոր դարգահի սան գլուխ զարկուկ:
Մեկ էլ գուրզ մի կա, կո էն բրջի գլուխ:
Ով էն ոսկի խնձոր բերի տակ, դնի ի ծոց /123/:

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՄԱՍ

Ազգային գաղափարախոսության դաստիարակումը էպոսի միջոցով

Թեման – «ՍԱՍՆԱ ԾՌԵՐ» էպոսը

Դասի տիպը – Ամրապնդման դաս՝ ԽԻԿ համակարգով

Տևողությունը– 1 դասաժամ

Դասի նպատակները

- Պատկերացում տալ էպոսի ժանրային առանձնահատկության մասին:
- Ընդգծել հայկական ժողովրդական էպոսի նշանակությունը:
- Ընդհանուր պատկերացում տալ էպոսի պատմական և առասպելական շերտերի մասին:
- Դիտարկել էպոսի ճյուղերի բովանդակությունն ու գաղափարները:

Դասի խնդիրները

- Նկարագրել հայկական ժողովրդական էպոսը՝ ժանրային ու բովանդակային առանձնահատկություններով:
- Բնութագրել էպոսի հերոսներին:
- էպոսից առանձնացնել պատմական ու առասպելական դրվագները:
- Առանձին ներկայացնել էպոսի ճյուղերը:

Մեթոդները

Կոլեկտիվ - համագործակցային, ինչպես նաև ուսուցման ակտիվ կամ փոխներգործուն (ինտերակտիվ) մեթոդների և հնարների (մտագրոհ, մտքի քարտեզ, պրոբլեմային հարց, շարադրություն և այլն) կիրառում:

էպոսի ուսումնասիրման դասի մեթոդական շղթան ընդգրկում է հետևյալ քայլերը.

- նախապատրաստական զրույց էպոսի մասին,
- էպոսի առանձին ճյուղերի բովանդակության քննարկում,
- էպոսի յուրաքանչյուր ճյուղի կերպարների բնորոշում,
- աշխատանք էպոսի երևակայական կողմի, լեզվի և ոճի առանձնահատկությունների, հիմնական մտքի, դաստիարակչական գաղափարի բացահայտման, ենթատեքստի կռահման ուղղությամբ,
- էպոսի հիմնական գաղափարի բացահայտում:

ԴԱՍԻ ԸՆԹԱՑՔԸ

Կազմակերպման փուլ (2 – 3 րոպե)

Դասի կառավարում, անհրաժեշտ պարագաների պատրաստում, նախապատրաստական զրույց, կազմակերպչական մաս:

Դասը սկսում ենք ԽԻԿ համակարգով:

1. Խթանման փուլ (4 – 6 րոպե)

ա. Նշում ենք օրվա դասի թեման և նպատակը: Անցկացնում ենք գիտելիքների ամփոփում[a] հարց ու պատասխանի միջոցով: Հաջորդ խնդիրը, որ պետք է կարևորվի էպոսի ուսուցման ժամանակ, նրա ժանրային առանձնահատկությունների շուրջ տարվող աշխատանքն է: Հեքիաթի ու էպոսի ժանրային առանձնահատկությունները համեմատելով՝ կարելի է նրանց միջև ընդհանրություններ ու տարբերություններ գտնել, երեխաների ուշադրությունը հրավիրել հեքիաթի կառուցվածքային առանձնահատկությունների, մասնավորապես հեքիաթի սկզբի, վերջի վրա: Խոսվում էնշված ժանրերի մասին, ընդգծվում , որ դրանք բանահյուսական ժանրեր են:Խոսելով տվյալ ժանրերի կառուցվածքի մասին՝ պետք է աշակերտներին բացատրել այն հանգամանքը, որ հեքիաթում և էպոսում մի խումբ կերպարներ գործում են ինչ-որ արարքներ՝ իրենց նպատակներն իրականացնելու մղումով: Այդ կերպարներն իրար օգնում են կամ խանգարում: Այդպիսով երեխան ըմբռնում է բարու և չարի գործոնը ոչ միայն հեքիաթում, այլև էպոսում, ինչպես նաև կյանքում, առօրյայում: Ստեղծագործության վերջում բարու հաղթանակը կոգևորի նրան՝ կատարելու բարի գործեր և հասկանալու, որ հաղթանակի բերկրանքը հեշտությամբ չի տրվում: Այսինքն՝ հեքիաթը և էպոսը պետք է մեկնաբանվեն, իմաստավորվեն իրենց իսկ կյանքի օրինակով:

1. Իմաստի ընկալման փուլ (25 րոպե)

Մտագրոհ մեթոդի միջոցով սկսում ենք նյութի հաղորդումը: Աշակերտներին ներկայացվում են էպոսի չորս ճյուղերը՝ բովանդակության ամբողջական ընկալման նպատակով: Այդ նպատակով կատարվում է.

- էպոսի երևակայական կողմի բացահայտում,
- էպոսի բարոյախոսական իմաստի վեր հանում,
- էպոսի լեզվի վերլուծություն:

էպոսի ուսումնասիրությունը իրականացվում է, ինչպես պատմվածքինը, այսինքն՝ որպես գեղարվեստական ստեղծագործություն: Սա նշանակում է՝ անհրաժեշտության դեպքում դասը պիտի իրականացվի բացատրական ընթերցանության մեթոդի բոլոր բաղադրամասերի կիրառմամբ:

Մտքերի քարտեզագրում» մեթոդի օգնությամբ էպոսից առանձնացվում են առասպելական հիմք ունեցող դրվագներ:

1. Երկվորյակ եղբայրների արտասովոր ջրային ծնունդը:

2. Սանասարի որդի Մեծ Միհրի՝ մարտից առաջ լողանալը հայրենի Կաթնաղբյուրի ջրով, նույնը կատարում է նրա որդի Դավիթը:
3. Սանասարի կռիվը ծովային վիշապի դեմ:
4. Սանասար ու Բաղդասար եղբայրների՝ անձրևի կամ ջրի համար կռվելը վիշապների դեմ:
5. Քառասուն -Ճյուղ-Ծամի ազատագրման դրվագը:
6. Քուռկիկ Ձալալին առնչվող տեսարանները. նա հրեղեն է, ջրային ծնունդ է, ինչպես Սասնա հերոսները:
7. Կանաչ քաղաքի վիշապի սպանության դրվագը:
8. Փոքր Միհրի՝ Ագռաքարում փակվելու դրվագը:



Խմբային աշխատանք

Թեմայի ամրապնդման համար դասարանը բաժանել 4 խմբի և յուրաքանչյուր խմբին հանձնարարվում է նկարագրել «Սասանա ծռեր» էպոսը:

Առաջադրանքը կատարելուց հետո խմբերը լրացնում են հարցման հետազոտական աղյուսակը:

«Սասնա ծռեր» էպոսը	
1. Նկարագրել Սանասարի կերպարը:	
2. Նկարագրել Մեծ Միհրի կերպարը:	
3. Նկարագրել Սասունցի Դավթի կերպարը:	
4. Նկարագրել Փոքր Միհրի կերպարը:	
5. Ի՞նչ է սովորեցնում էպոսը:	

Աշակերտները էպոսից պետք է առանձնացվեն նաև համապատասխան հատվածներ, որոնք բնութագրում են այս կամ այն կերպարին: Այսպիսի վերլուծության արդյունքը պետք է դառնա հեղինակի դիրքորոշման ըմբռնումն ու ընթերցողի վերաբերմունքի ձևավորումը ընթերցածի բովանդակության նկատմամբ: Հիմք ընդունելով բովանդակային բաղադրիչները՝ անհրաժեշտ է նախ երեխաների ուշադրությունը հրավիրել այն հատվածների վրա, որոնք ազգային գաղափարախոսության տարրեր են բովանդակում, նաև որոշակի բառերի ու արտահայտությունների վրա, քանի որ բառերի միջոցով է առաջին հերթին հնարավոր որոշել հերոսի հոգեվիճակը, նրա արարքների դրդապատճառները, հերոսի ինչպիսին լինելը, հեղինակի վերաբերմունքը նրա նկատմամբ և այլն:

Նշել Սասունցի Դավթի կերպարը բնութագրող տողեր	

Աշխատանքի ավարտից հետո խմբի անդամներից յուրաքանչյուրը պետք է ներկայացնի իր աշխատանքը: Յուրաքանչյուր խմբին լսելուց հետո պետք է ամփոփել խմբային աշխատանքը՝ սահուն անցում կատարելով դասի հաջորդ քայլին:

Կշռադատման փուլ - 4 – 6 րոպե

Խմբային տարբեր աշխատանքներից հետո աշակերտները արտահայտում են սեփական մտքերը հայկական ժողովրդական էպոսի վերաբերյալ:

Գնահատում և անդրադարձ (2 -3 րոպե):

Հարցերի միջոցով ուսուցիչը պետք է պարզի դասի թերություններն ու առավելությունները: Գնահատումը պետք է կատարել ըստ խմբային և անհատական ցուցանիշների:

Ամբողջ դասի ընթացքում համեմատություններ են անցկացվում էպոսի և տարբեր հեքիաթների միջև, և ամբողջացվում են էպոսի վերաբերյալ աշակերտների գիտելիքները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հեքիաթի պես էպոսը սնում է մեր մտածողությունը ժողովրդի հոգեբանության, ազգային գաղափարախոսության մասին հարուստ նյութով: Բացի դրանից՝ էպոսի դաստիարակչական նշանակությունը: Այն ներկայացնում են բարոյական արժեքներ ու սկզբունքներ, որոնք ներկայացվում են ոչ թե որպես խրատ ու քարոզ, այլ արտահայտվում են հերոսների արարքներով, խոսքերով: Հենց այդ հանգամանքն էլ ուժեղացնում է ընթերցողի զգացմունքների ու համոզմունքների վրա թողնվող ազդեցությունը:

Սանասարի և եղբոր ճյուղը ձևավորվել է երկվորյակ սրբազան նախնիների և ամպրոպային վաղընջական առասպելների հիքմի վրա (հերոսների ջրային ծնունդը, աստանդական կյանք, երկրի ու տոհմի հիմադրում, ջրարգել վիշապների դեմ կռիվ, ջրերի և աղջիկների ազատագրում, ամուսնություն): Մեծ և Փոքր Միհրի ճյուղերի հիմքում ընկած են հին հայկական և հնդիրանական երկնային լույսի և արեգակի Աստված Միհրի առասպելաբանական մոտիվները, զուգորդված ճայռում փակված հերոսների տեղական հնագույն առասպելի (Մեծ Միհրի՝ առյուծ սպանելը և սասունցիներին սովից փրկելը, Փոքր Միհրի անհաշտ պայքարը աշխարհի անարդարությունների դեմ, ժայռում փակվելը, արդարության և փրկության ակընկալիքները՝ կապված նրա ՝ ժայռից դուրս գալու հետ): Դավթի ճյուղի նախահիմքում ընկած է ամպրոպային կռվի հին հնդեվրոպական առասպելը (Դավիթն ու Մսրա Մելիքը նույն դյուցազուն հորից սերված խորթ եղբայրներ են, ի ծնե հակոտնյաներ, անձնավորում են հակադիր սկզբունքներ. Դավիթը գեղեցիկ արտաքինով, հրեղեն ձիով, կայծակե թրով սպանում է ջրաղաց քարերի տակ խոր հորհում թաքնված Մսրա Մելիքին, ազատում, երկիրն ու մարդկանց նրա սպառնալիքից, տոնում իր հաղթանակը, ամուսանանում):

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Աբեղյան Մ., Մատենագրություն Սասունցի Դավիթ Հայ ժողովրդական վեպում, Երևան, 1939:
2. Աբեղյան Մ., Հայ ժողովրդական վէպը, Թիֆլիս, 1908:
3. Գրիգոյան Ա., Հայ ժողովրդական բանահյուսություն, Երևան, 1980:
4. Դոլուխանյան Ա., Հայ ժողովրդական բանահյուսություն, Երևան 2008:
5. Դոլուխանյան Ա., Հայ գրականության պատմություն, Երևան, 2006:
6. Եղիազարյան Ա., «Սասնա ծռերի» պոետիկան, Երևան, 1999:
7. Իսահակյան Ա., Սասմա Միեր, Երկեր, հ. 2, Երևան, 1958:
8. Հարությունյան Ս., Հայ առասպելաբանություն, Բեյրութ, 1993:
9. Հարությունյան Ս., «Սասնա ծռեր» հերոսավեպի ծիսաառասպելական մի քանի հատկանիշների մասին, «Պատմա-բանասիրական հանդես», Երևան, 2010, N 1
10. Հարությունյան Ս., Բանագիտական ակնարկներ, Երևան, 2010:
11. Հովսեփյան Լ., Հրաշապատում հեքիաթի տարրերը «Սասնա ծռեր» էպոսում// «Հովսեփ Օրբելին և «Սասունցի Դավիթ» էպոսը», Երևան, 2015:
12. Ղանալանյան Ա., Հայ ժողովրդական հեքիաթները // Պատմա-բանասիրական հանդես, Երևան, 1965, N 3:
13. Չարենց Ե., Գիրք ճանապարհի, Երևան, 1933:
14. Սրվանձտյանց Գ., Գրոց և բրոց, Սասունցի Դավիթ կամ Միերի դուռ, Երևան, 1874:
15. Սասունցի Դավիթ, համահավաք բնագիր Երևան, 1990:
16. Օրբելի Հ., Հայկական հերոսական էպոսը, Երևան, 1961:
17. Абрамян Л., Парные образы «Сасна Црер». близнецы, сводные братья, двойственные герои, Հայկական «Սասնա ծռեր» էպոսը և համաշխարհային էպիկական ժառանգությունը, Երևան, 2004: